219 Ների՛ր Դու իմ անցած օրերը,

1. Ների՛ր Դու իմ անցած օրերը,
Որ ապրել եմ ես առանց Քեզ,
Ոչինչ չեմ կարող մոռանալ ես,
Ների՛ր մեղավորիս, ների՛ր:

Տե՛ր իմ, ների՛ր, խնդրում եմ Քեզ,
Ինձ հետ եղի՛ր ընդմիշտ:

2. Ների՛ր թերահավատությունս,
Եվ անհավատ հոգուս ների՛ր,
Մեղքերով բեռնավորված միտքս
Ների՛ր, սիրովդ ինձ ծածկի՛ր:

3. Ների՛ր, թեկուզ անարժան եմ ես,
Որ Քո սերը չեմ գնահատում,
Բայց Դու այդքան մեծ սիրով լի ես,
Խաղաղություն ես պարգևում:

4. Ների՛ր տառապանքներիդ համար,
Իմ փոխարեն որ կրեցի՛ր,
Ների՛ր անարժան կյանքիս համար,
Իմ ծանր մեղքերը ների՛ր:

5. Ների՛ր և Քո լույսը տարածի՛ր
Իմ փշոտ ճանապարհի վրա,
Քո հավատարիմ ձեռքը մեկնի՛ր,
Որ ես քայլել կարողանամ: